

# Հ ՆԱԽԱՀԱՎԵԼԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԱԲԱՐԻ ԲԱՐՔԱՆՈՒՄ

## Ձ. Ա. ԵՐՎԱՆԴՅԱՆ

Բարբառների քերականական և հնչյունական համակարգերի անվերջ փոփոխության հետ միաժամանակ փոփոխվում է նաև բառի կառուցվածքը. երբեմնի բառակազմական կամ ձևակազմական շատ մասնիկներ միաձուլվում են բառարմատին, կորցնում իրենց նախկին իմաստը, որի հետևանքով էլ պատմականորեն բաղադրյալ գիտակցվող բառը լեզվի հաջորդ ժամանակահատվածում դառնում է անտարբալուծելի: Բնականաբար այս դեպքում անհարկի է դառնում արմատ//հիմք բառամասերի անջատումը. «Բառի արմատները որոշելիս պետք է միշտ նկատի ունենալ լեզվի զարգացման շրջանները, որովհետև լեզուն միշտ փոփոխվում է, ուստի ինչ որ արդի լեզվի մեջ արմատ է, լեզվի մի անցյալ շրջանում կարող է ածանցված բառ լինել. ինչպես օրինակ՝ «դանակ» բառը այժմ այլևս մեզ համար ածանցական բառ չէ, այլ մի արմատական բառ, քանի որ մեր լեզվի մեջ այժմ «դան» բառ չկա «դանակ» նշանակությամբ»<sup>1</sup>: Իսկ որ հայերենի բարբառները արմատների կազմում ժառանգել են հնագույն շատ մասնիկներ, կարող ենք հաստատել թե՛ Ղարաբաղի, թե՛ մյուս բարբառների փաստերով: Նման միջոցներով բառարմատի ձևավորման բազմաթիվ օրինակներ են վկայված հայագիտական մեծ ու փոքր ուսումնասիրություններում: Հարկ ենք համարում այստեղ ներկայացնել Գ. Ջահուկյանի հետևյալ դիտողությունը. «Մի շարք դեպքերում բարբառները գրաբարի համեմատությամբ հանդես են բերում արմատակազմական-բառակազմական զգալի տարբերություններ, որոնց հիմքերը թերևս հասել են մինչև վաղնջահայերենի շրջանը.

- 1) գրաբարյան արմատական ձևի դիմաց աճականով կամ հին ածանցով ձև ...
- 2) գրաբարյանից տարբեր աճական կամ հին ածանց»<sup>2</sup>:

Չնայած լեզվական հնագույն ձևերի պահպանման մի շարք պատճառներ են նշվում հայերենի բարբառների համար, սակայն դրանց մեջ կարևորը ավանդապահությունն է, որի հիմնավորման համար նկատի են ունենում ինչպես հնչյունական և բառային առանձին դրսևորումներ, այնպես էլ հնագույն երևույթների ամբողջական պատկերներ: Հայերենի խոսակցական տարբերակի այս վերջին հատկությունը հետևյալ կերպ է ներկայացնում Ա. Այտընյանը. «Համոզված պետք ենք ըլլալ՝ որ ռամիկն յուր պահպանողականությամբը հնագիտաց և բանասիրաց նորանոր գյուտերուն հետ կրնա մրցիլ. և կարծվածեն շատ ավելի ծանրակշիռ ուղիղ հետևություններու կու գանք՝ ռամիկն այս արդյունքը դիտելով ու հարգելով»<sup>3</sup>:

Հնագույն բառաձևերի պահպանման հիմնական պատճառներից մեկն էլ, անշուշտ, այն է, որ ժողովուրդը բառային զուգահեռ ձևերից ընտրություն է կատարում, վերցնում է այն, ինչ որ հարմար է իր առօրյա խոսակցության և մտքերի պարզ փոխանակման համար: Բարբառների բառապաշարի այս յուրահատկության մասին Մ. Աբեղյանը գրում է. «Ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնվածություն են, որովհետև այդ ժամանակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես ուրիշներին հաղորդելու և ուրիշներինը հասկանալու համար, ուստի նույնանիշ բառերի կարիք չկա, քանի որ մեկ բառն էլ բավական է միտքն արտահայտելու համար: Այդ պատճառով, եթե մի կողմից նույնանիշ բառեր են առաջ գալիս, մյուս կողմից էլ բարբառները

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 9:

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 255:

<sup>3</sup> Ա. Այտընյան, Ջննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Երևան, 1987, էջ 222:

ձգտում են այդ անօգուտ առատությունը բոթափելու»<sup>4</sup>: Բառընտրության պատճառով էլ ժողովրդային սոսկացական լեզվում և մանավանդ նրա տարածքային սահմանափակումով տարբերակներում ամեն բառ գործածվում է այս կամ այն առարկան և զաղափարը արտահայտելու նպատակով: Բնականաբար մեծանում է յուրաքանչյուր բառային միավորի կիրառական հաճախականությունը, որի շնորհիվ էլ հիմնավորապես հաստատվում է բառապաշարի մեջ և առավել երկար մնում իր նախկին կառուցվածքով: Այս ամենով *բնական է դառնում, որ ժամանակակից հայերենի բարբառներում առանջնացվում են բառային հնագույն այնպիսի ջեեր, որոնք չեն պահպանվել հին հայերենի գրական փարբերակում:*

Անցնելով Ղարաբաղի բարբառի բառային կազմի քննությանը՝ պետք է նշել, որ այստեղ *բառարմատների (բառահիմքերի) հաստատումը ընթացել է հնագույն հնչյունակազմի պահպանման, չայնդարձի փարբեր աստիճանների դրսևորման, բաղաչայնների փարբեր փոփոխություններով արտահայտված արմատների չեալորման, հնագույն արմատական ջեերի գործածության ուղղություններով:* Այդ բոլոր երևույթների հաստատման համար բարբառն ունի բառերի առանձին շարքեր, որոնց քննարկմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Ղարաբաղի բարբառի համար առավել աչքի ընկնող հնագույն երևույթներից է *չայնավորից առաջ նախաչայն հ հնչյունի առկայությունը* մի շարք բառերի սկզբում, որի ծագման, հաստատման և տարածքային առանձնահատկությունն ստանալու մասին հայագիտության մեջ արտահայտված են տարբեր կարծիքներ: Սակայն երևույթը առավել մանրամասն է քննում Գ. Ջահուկյանը և տարբեր աղբյուրներով հանդես գալիս բնորոշ դիտողություններով: Ահա դրանցից մեկը. «...ինչպես հայտնի է, հայերենի բառակազմային հ-ն տարբեր ծագում և տարբեր հնություն կարող է ունենալ, հնդեվրոպական կոկորդայինից (\*H), \*P-ից և \*S-ից եկող և բարբառային էական սահմանափակում չունեցող հ-ի կողքին առկա են որոշակի տարածքներով սահմանափակված՝ սկզբնային շնչի հավելական առկայության կամ, ընդհակառակն, բացակայության դեպքեր... դատելով ձայնավորներին նախորդող սկզբնային շնչի՝ ժամանակակից բարբառների հատուկ բաշխումից՝ կարելի է ասել, որ ձայնավորների ուժեղ կամ շնչային սկիզբը ավելի հատուկ է եղել արևելյան տարածքի ծայրասկզբներին գրեթե ամբողջությամբ (Արցախ, Ուտիք, Սյունիք, Փայտակարան, Պարսկահայք), հարավ-կենտրոնական բարբառային գոտուց՝ Տուրուբերանին ու Վասպուրականին, այլև Բարձր Հայքի և Փոքր Հայքի որոշ տարածքներին (Կարնո, Սեբաստիայի, Դարեմոնի և այլն)»<sup>5</sup>:

Հր. Աճառյանը ոչ միայն տեսական դիտողություններով, այլև բառերի որոշակի շարքեր ներկայացնելով՝ ցույց է տալիս, որ նախահավելական հ-ով ձևերը ինչ-ինչ մասով հայերենի հնագույն վիճակն են ներկայացնում. «Երբ գրաբարի մի խումբ բառեր (ընդհանրապես ձայնավորով սկսվող) համեմատում ենք նախալեզվյան ձևերի հետ, տեսնում ենք, որ բառակազմից մի բաղաձայն (ընդհանրապես P կամ S) ընկնում է հայերենում, մինչդեռ բարբառային ձևում մնում է: Օրինակ Տրեհ-արմատը տալիս է հյ. արբենալ, *seph>*եփե, *per>*երի, *portu>*որթ, բայց սրանց բարբառային ձևերը լինում են հարբել, հեփել, հերի, հորթ: Բնականաբար այս բարբառային ձևերը, որոնք ունեն հ նախաձայնը, ավելի հին են, քան գրաբարը, ուստի և ներկայացնում են մի բարբառ կամ բարբառներ, որոնց մեջ նախաձայն P, S չէր կորչում»<sup>6</sup>:

Նպատակ ունենալով ներկայացնելու ձայնավորից առաջ արտահայտված նախահավելական հ հնչյունի ամբողջական քննությունը՝ Հ. Մուրադյանը այն հակադրության մեջ է առնում ձայնեղ հ շնչի դրսևորման հետ: Հեղինակի կարծիքով խուլ հ-ն լիարժեք հնչյուն է և առավելապես հատուկ է Արցախ-Սյունիքի տարածքին: Պետք է նշել, սակայն, որ եթե Հ. Մուրադյանը փաստական նյութի խմբավորման ընթացքում խուլ հ-ի համար չի բացառում նախալեզվյան հիմքերի հնարավորությունը, ապա ընդհանուր եզրակացության մեջ հեղինակը ակնհայտորեն զնում է դեպի այլ կողմնորոշում. «Առհասարակ բարբառային ձևերում հավելական հ-ի գոյությունը հնդեվրոպական P-ով և S-ով բացատրելը մի վարկած է, որը, թեև հիմնված է հնչյունական որոշակի համապատասխանության վրա, բայց կարող է նաև պատահական զուգահեյություն հետևանք լինել: Չէ՞ որ հավելական նույն հնչյունը ունեն նաև փոխառյալ բառերը, ինչպես նաև հնդեվրոպական ծագման այն բառերը, որոնք ձայնավորական սկիզբ ունեն»<sup>7</sup>:

<sup>4</sup> Մ. Արևիկյան, նշվ. աշխ., էջ 156:

<sup>5</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 372:

<sup>6</sup> Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, Երևան, 1951, էջ 410-411:

<sup>7</sup> Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.1, Երևան, 1982, էջ 319:

Գ. Ջահուկյանի, էդ. Աղայանի ուսումնասիրություններից և արձանագրած բառարանից դուրս հանելով Ղարաբաղի բարբառին հատուկ փաստերն ու վկայությունները՝ պարզվում է, որ հ նախահավելականով բառերը ծագումնաբանորեն երեք շերտ են ներկայացնում՝ բնիկ, չստուգաբանված և փոխառյալ բառեր, որոնք ունեն քանակական անհամեմատելի հարաբերակցություն: Այսպես, փոխառյալ են ընդամենը երեք բառեր, որոնցից *հւնրզակ* «արձակ»՝պիլ *harzak*, *հուշ* «ուշք»՝իրան *hoš*, *հս* ձևերն ունեն հավելականով նախահիմքեր, իսկ *հորաք*, «ուրազ» բառի համար Հր. Աճառյանը վկայում է ասուրական *ur-ra-ka* «քարտաշ», որը հայերենին մոտ իմաստի համար այդ լեզուն կարող էր ունենալ նաև այլ նախաձև:

Եթե առաջնորդվենք արձանագրած բառարանի տվյալներով, ապա նախահավելականով չստուգաբանված բառերը զգալի թիվ են կազմում, սակայն Գ. Ջահուկյանի, էդ. Աղայանի ստուգաբանություններով այդ բառերի մի մասի համար նախալեզվյան հիմքեր են առանձնացվում: Այդպես են օրինակ՝ անցանել, երդիկ (Աղ.), աներ, երամի, երինգ, ոլոր, ոջիլ (Ջահ.) բառերը: Հավաստի պետք է համարել նաև Գ. Ջահուկյանի հետևյալ դիտողությունը. «Հավանաբար \**ōlen*-ից է ծագում նաև ուլն, ուլունք, վեգ, պարանոցի օղակածն ոսկր» բառը, որը Լիդենը միացնում է ուլն «պարանոց» բառի հետ: Այսպիսով, Ղարաբաղի բարբառում չստուգաբանված են մնում հ նախահավելականով հետևյալ բառերը՝ *հւնջի* «ագի», *հըմանչէլ* «ամաչել», *հէդի* «եդի, նոր հասնող ցորենի հասկ», *հօթիս* «ոթիս, սև գույնի բզեզ», *հիլօն* (նը) «ոլոն», *հըղօղ* (ոտ) «ուղեղ», *հօն/հօռի* «ոտ, ոտենի»:

Բարբառում համեմատաբար մեծ քանակ են կազմում բնիկ կամ նախալեզվյան ծագում ունեցող հ նախահավելականով ձևերը: Դրանք նախալեզվյան հիմքերի համեմատությամբ երկու խմբի են բաժանվում: Առաջին խումբը ներկայացնում են այն բառերը, որոնց դիմաց նախալեզվում վկայված են P, S, K, Ս նախաձայնով ձևերը, ընդ որում դրանք հանդիպում են բոլոր ձայնավորներից առաջ (բացի է-ից): Համեմատաբար մեծ քանակ են կազմում P նախահիմքը ներկայացնող բառաձևերը, ինչպես՝ \**plios*-հղէվոր(օր), «պլտր», \**per̄to*>իերթ/հնրթ «երդիկ», \**preint*>իընդրակ «երանի», \**per̄t* (ըստ Աճառյանի)>իերի «երիչորքտասնիների առաջին ոտքերի վերին մասը՝ ուսի մոտ», \**port*>ի-հօրթ «կոլի հորթ», \**por̄k*>իօրս-«որս», \**po(u)* los-հօլ/հօլ «ուլ»: Այլ նախաձայնով հիմքերը սահմանափակ են և ընդգրկում են հետևյալ բառերը՝ \**knid*-հանիծ, «անիծ», *sr̄bh*-հարփել «արբել, արբենալ», \**sn* (t)- *sko*>իընցնէլ<անցնել, հանգչել», \**KUL* - *hēv*/իիթ «երք», \**KUL* -իինչ «ինչ», \**KUO*>իօլ/իուլ/իու «ով», *k'ęren̄o*>իերինց<երինց>, *ū-ro* >իոնօր (էլ) «ոլոր, ոլորել»:

Առանց նախաձայններով հիմքերի դիմաց հավելական հ ունենք հետևյալ բնիկ բառերի սկզբում հանդ «արտ, դաշտ», <\**andhe-*, հեռալ «եռալ, եփվել, սաստիկ ցավալ»<\**erso*, *իըլէ(ի)* «ճանապարհ»<\**u liilo-*, *իըղօլ* (ուկ)>«ուղուկ», «քթամատի և ճկույթի բացվածքի հեռավորություն», *հօսի* «ոսի, դյուրավառ թուփ»< \**ok'io*, *իուչիլ* «ոջիլ»<\**orghilo*>հանէր «աներ»>*aner*: Հայագիտության մեջ *ընդ* նախադիրով կազմություն են ընդունում *իընգեր*-*ընկեր*», *իընդրէլ* «ընտրել» բառերը, ընդ որում *ընդ*-ի համար առանձնացված նախահիմքը ներկայացնում են առանց որևէ նախահավելականի. «Հետազոտողները տարբերում են *ընդ* «փոխարեն» (սեռ. *իուլովուլ*) և *ընդ* «տակ» (գործիական *իուլովուլ*) նախաձևերը՝առաջինը կապելով \**an̄*, իսկ երկրորդը՝ *ընդ*ոս նախաձևերի հետ: Հնարավոր է ենթադրել երկու իմաստների խառնում հայերեն *ընդ*-ի մեջ, թեև «տակ» իմաստը հայերենում արտահայտվում է գործիականով, հին *իընկերենում* հայցականով և սեռականով, այսինքն առկա է գործառական տարբերությունը»:

Այստեղ հարկ ենք համարում ավելացնել, որ նախահավելական հ-ով ձևերը չեն ընդգրկում Ղարաբաղի բարբառի բոլոր խոսվածքները, որի պատճառով էլ առաջ է եկել փաստերի հավաքման և ամփոփման պահանջ: Անձնական հետաքրքրություններից և ձեռնարկումներից բացի, մենք հաշվի ենք առել նաև Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային բարբառը» աշխատության մեջ եղած առանձին դիտողություններն ու բառացանկում տեղ գտած օրինակները: Այսպես, բառասկզբի *h* հնչյունի տարբեր արտահայտությունները ներկայացնելիս առանձին առիթներով հեղինակը բերում է նաև *h* հավելականով ձևեր. «*Որս, որսկան* բառերում էլ Մարտակերտի հյուսիսարևելյան՝ նշված համարներով գյուղերում լինում են *հօրս, հօրսկան...Որթ (հորթ)* բառի դիմաց գործածվում է *ղսնա*, միայն հարավում հազվադեպ լինում է *վըերթ*, բայց կա հյուսիսում հորթատել»<sup>10</sup>: Հ բաղաձայնի կրած փոփոխությունների նկարագրության ընթացքում Կ. Դավթյանը նշում է. «Հո կապակցությունը բառասկզբում փակ վանկով բառերում (հոտ, հոր և այլն) հյուսիսից հարավ դառնում է *վըս, վըէ, վը*, մեծ մասամբ *վըէ* բայց *հոր* բառը Մարտակերտի և Ստեփանակերտի շատ գյուղերում մնացել է *հօ*»<sup>11</sup>: Փաստերի ամբողջացման ընթացքում պարզվել

<sup>10</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 165:  
<sup>11</sup> Նույն տեղում, էջ 158:  
<sup>12</sup> Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային բարբառը, Երևան, 1966, էջ 40:  
<sup>13</sup> Նույն տեղում, էջ 70:

է, որ բառասկզբի *հ* նախահավելականով բառերը առավելապես պահապանված են կենտրոնից հեռու ընկած խոսվածքներում, մանավանդ Մարտակերտի և Շահումյանի հատվածում, որ ավելի հարազատ է արտահայտվում հին ու նոր գրական տարբերակների հ-ի արտասանական օրինաչափությունը բառասկզբի նախաձայնավորական դիրքում. եղած շեղումները մեր նախանշած բառերում են:

Պետք է նշել, որ հայագիտության մեջ տարբեր մտնեցումներով են մեկնաբանվում *հ* նախահավելականի համապատասխանությունը նախալեզվյան այս կամ այն նախաձայնի հետ: Ինչպես վերը տեսանք, Հր. Աճառյանը բարբառային *հ* նախահավելականի և նախալեզվյան բառասկզբի *Բ, Տ* հնչյունների միջև որոշակի կապ է տեսնում. այդ է վկայում նաև հեղինակի՝ *ալևոր* բառի վերաբերյալ արտահայտած կարծիքը. «Ինչպես տեսնվում է, բարբառները միաձայն վկայությամբ ցույց են տալիս նախաձայն *հ*, որ ո՛չ թե մի նոր հավելված է, այլ նախալեզվյան *ժ* ձայնի կանոնավոր շարունակությունը. մինչդեռ գրաբարի մեջ ընկած է, հմմտ. հորթ»<sup>12</sup>: Հակառակ Հր. Աճառյանի՝ Գ. Ջահուկյանը *ալևոր, արքեմալ* բառերի սկզբում առկա *հ-ի* հնագույն ծագումը որոշ կասկածանքով է ընդունում, մանավանդ այն պատճառով, որ այդ *հ-ով* ձևերը համընդհանուր են հայերենի բարբառներում: Մինչդեռ հին հայերենը դրանց դիմաց ունի առանց նախահավելականի ձևեր. «Բառասկզբի (ձայնավորից առաջ) գրական լեզվի (գրաբարի) համեմատությամբ առկա հավելական շնչի համար տարբեր ծագում է ենթադրվում. ա) մի շարք դեպքերում *հ-ն* կարող է գալ հայոց լեզվի զարգացման ամենավաղ շրջանից և արտացոլել *հ-ն*. *ս-ն* կամ *ք-ն*. այս դեպքում կարծվում է, որ այդ *հ-ն* պահպանվելով հայ բարբառների մի ճշանակալից մասում, չի պահպանվել գրաբարի արտասանական նորմաների հիմքում ընկած խոսվածքներում. այս ենթադրությունը որոշ կասկածներ է հարուցում այն առումով, որ այս կարգի *հ-ն* որոշ դեպքերում տարածված է ժամանակակից բոլոր բարբառներում. հմմտ. գրաբարի *արք.* արմատի դիմաց՝ *հարք* (\**σϕ-*), ալի(ք), *ալևոր-ի* դիմաց՝ *հալևոր* (\**ϕլjo-*) և այլն»<sup>13</sup>: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ գրաբար-բարբառներ հակադրության համար կարևոր դեր կարող էին խաղալ հայերենի հնագույն գրական տարբերակները, այսինքն՝ հնագույն հայերենում կամ վաղմջափայտներում գործել են արտասանական ինչ-ինչ օրինաչափություններ, որոնցից մեկն էլ թույլ արտասանվող նախաձայնի մերժումն էր գրական տարբերակում, և գրաբարն էլ նույն հնչյունակազմով ժառանգել է՝ այդ կերպ հեռանալով ժամանակի խոսակցականներից: Իսկ որ *հ* նախահավելականի արտահայտությունը բարբառներում հնագույն երևույթներից է, կարելի է հաստատել Վանի, Ուրմիայի, Շատախի և այլ բարբառներում գործող հնչյունափոխական մի այլ օրինաչափությամբ. այն է՝ նման բառերի սկզբի *հ-ն* փոխվում է *խ* հնչյունի այնպես, ինչպես ընդհանրացված *հ* բաղաձայնը:

Նշենք նաև, որ Ղարաբաղի բարբառում պահպանված հնագույն որոշ ձևեր կարող են արժեքավոր լինել ոչ միայն հայերենի, այլև ցեղակից լեզուներում առկա ինչ-ինչ հիմքերի վերականգնման կամ հաստատման համար: Դրանցից են, օրինակ, *հոսլ* բառի համար բարբառում պահպանված իմաստային և կառուցվածքային զուգահեռները: Ամենից առաջ ներկայացնենք հիշյալ ձևերի վերաբերյալ Հր. Աճառյանի՝ համեմատաբար ծավալուն դիտողությունը. «Այս բառերը բաժանվում են երկու խումբի. առաջին խումբը, որի մեջ մտնում են արիական, հույն, և լիթ., անգլ., փոույգ. ձևերը և *հ*. սաքս. *irri*, ցույց են տալիս «կոիվ, բարկություն, ոխ, նախանձ» նշանակությունը, իսկ երկրորդ խումբը, որի մեջ մտնում են լտ. գոթ. ձևերը և հին սաքս. *irrian*, ցույց են տալիս «շարժիլ, երեքալ, տատանիլ, սխալիլ» նշանակությունը: Երկու խումբերը նախապես երկու տարբեր արմատների ծնունդ էին համարում, բայց հիմա, և հատկապես գերմանագետների կողմից, համարվում են մեկ արմատ: Միության կապը հաստատում է օր. անգլ. *ierre*, որ նշանակում է թե՛ «զայրացած» և թե՛ «սխալած, մոլորած»: Իբրև նույնպիսի ապացույց է ծառայում նաև հայերենը (ըստ Լիդենի), որ *հոսլ* և *զհոսլ* միացնում են իրենց մեջ «շարժիլ, երեքալ, հոգեպես բորբոքվիլ, գրգռվիլ» նշանակությունները... Ղարաբաղի բարբառում *հոսլ* բառը, *հհոսլ* ձևն ունի, ինչ որ ապացուցում են *հո* և *հհո* արմատների նույնությունը: Հայերենի մեջ *հոսլ* ունի նաև «եփվիլ» նյութական նշանակությունը, որ մյուս լեզուներում չկա և որ թվում է թե նույնպես նախնական է»<sup>14</sup>:

Ինչպես երևում է, Հր. Աճառյանը Ղարաբաղի բարբառի համար ընդունում է միայն մեկ ձև՝ *հհոսլ*, որ ընդգրկում է բառի համար հատկացվող բոլոր նշանակությունները: Սակայն բառի իրական պատկերը այլ է բարբառում: Իմաստային տարբեր առումները ուշադիր

<sup>12</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական քառաբան, հ. Ա., Երևան, 1971, էջ 94:

<sup>13</sup> Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 265:

<sup>14</sup> Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 2, 1973, էջ 30:

քննելու դեպքում բառի համար առանձնացվում են որոշ խոսվածքներում երկու, իսկ մի շարք խոսվածքներում՝ հինգային երեք զուգահեռ ձևեր՝ *յեռայ, հեռայ, հէրս*՝ յուրաքանչյուրի մեջ շեշտվելով այս կամ այն նշանակությամբ: Այսպես, հաստատապես կարելի է ասել, որ *հէրս* ձևը արտահայտում է «կատաղություն, զայրույթ», *հէն//հեռայ* ձևն ունի «ցավ, ցավալ, վիշտ, սուգ, կարեկցանք» նշանակությունները: Ինչ վերաբերում է «եռայ, եփել» իմաստներով գործածություններին, ապա դրանք հաճախ շփոթվում են՝ ընդունելով *յեռ կ'սւլ* և *հեռ կ'սւլ* ձևերը: Առաջինը սովորաբար գործածվում է «մեղմ» նշանակությամբ, իսկ երկրորդ ձևի մեջ նկատվում է սաստկականության իմաստ, որն արտահայտվում է ոչ միայն նյութական իմաստով, այլև ներքին «եռանդ, ձգտում, եփել» նշանակություններով: Այս վերջին հանգամանքից ելնելով՝ կարելի է եզրակացնել հետևյալը. *հեռայ, հէրս*, ձևերի համար կամ գոյություն են ունեցել *հռայ*-ից տարբեր նախահիմքեր, կամ պարզապես հայերենը ձևավորվել է բառի սկզբում հու>ի սաստկական մասնիկի հավելումով: Չնայած այս հավելականի ծագման և բառիմաստի ձևավորման յուրահատուկ դերի մասին հայագիտական ուսումնասիրություններում կան տարբեր կարծիքներ ու մեկնություններ, սակայն առավել մանրամասնությամբ է երևույթին անդրադարձել Հր. Աճառյանը. «Այս մասնիկը (*հ- Ջ. Ե.*) կարող է բնիկ հայ լինել, բայց կարող է նաև իրանյանից փոխառյալ լինել. (բավական ճոխ գործածություն ունի իրանյան լեզուների մեջ): Վերջին պարագային՝ հարմարագույն է ենթադրել, որ բառը (*հօր-Ջ. Ե.*) ամբողջապես փոխառյալ լինի պի. \*huzōr զնդ. huzāvar հոմանիշից: Բայց նույնիսկ եթե հայակերտ կառուցվածք էլ լինի, իրանյան ազդեցությունը անհերքելի է»<sup>15</sup>:

Ինչպես արդեն նշեցինք, Ղարաբաղի բարբառում ձայնավորից առաջ *հ* նախահավելականը արտահայտվում է հիմնականում բնիկ և չստուգաբանված բառերի սկզբում: Եթե նկատի ունենանք, որ նոր ստուգաբանություններով աստիճանաբար համալրվում է բնիկ բառերի շարքը, բնականաբար կարելի է ենթադրել, որ ձայնավորից առաջ *հ* սաստկականի հավելումը հնագույն հայերենին հատուկ երևույթ է, և նրա սկիզբը պետք է որոնել հնդեվրոպական նախալեզվում. հենց այս նկատառումով Գ. Ջահուկյանը *հ-հու* հավելականի համար հիմք է ընդունում նախալեզվյան \*su ձևը<sup>16</sup>:

Հարկ է ավելացնել, որ Ղարաբաղի բարբառում հաստատված որոշ ձևերի համար կարելի է ենթադրել *հ* սաստկականի հավելում: Այսպես, իմաստային նման երանգով է առանձնացնում *հրպարապ* բառը Հր. Աճառյանը բարբառի համար. «Այս բոլորից դուրս է պարապ>դրբ. հպարապ, որի սկիզբը դրված *հ* հավելականը ոչ թե նախորդների կարգից է, այլ պրս. *հս* մասնիկն է, որ գտնում ենք նաև *հլու*, *հօր*, *հպարտ*, *հուժկու*, *հմուտ* և ուրիշ մի քանի բառերի վրա: Սրանով *հպարապ* դառնում է «բոլորովին պարապ»<sup>17</sup>: Եթե նկատի չունենանք *հեռ կ'սւլ* և *յեռ կ'սւլ* «եփել» ձևերի իմաստային շփոթումը, ապա մյուս դեպքերում *հ* մասնիկը բառաձևերին հաղորդում է «խիստ, ուժգին, սաստիկ, վերին աստիճանի» իմաստները, ինչպես՝ *հեռայ* «սաստիկ հեռալ, խիստ ցավալ», *հէրս* «վերին աստիճանի զայրացած լինելը, կատաղած լինելը, կատաղություն» և այլն: Համեմատաբար «սաստկականության թույլ երանգ է հաղորդում *հ* նախահավելականը հետևյալ բառաձևերին՝ հնդեվրոպական «բեռը խիստ ամրացնելու համար *չոդ*», *հոն //հոնի*» *հոն սնէլ* «խիստ չարչարվել, դեպի իրեն քաշել, սեղմել, ճնշել», *հոփս* «չափազանց բամբասկոտ, անգործ, տանը անվերջ պարապ մնացող», թերևս նաև *հոդ*» *հղաղի* «սաստիկ տրորել, ճզմել, մանրել»:

Ամփոփելով նախահավելական *հ* բաղաձայնի կիրառական հնարավորությունները Ղարաբաղի բարբառում՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության:

Այդ հնչյունը ավելի հաճախակի է հանդիպում կենտրոնից հեռու ընկած տարածքներում՝ միաժամանակ հանդես բերելով իմաստային զանազան դրսևորումներ: Չայնդարձի զանազան աստիճաններով տարբերակումներից բացի, առավել ակնառու է սաստկականությունը, որը ոչ միայն բառի նշանակությանը նոր երանգ է հաղորդում, այլև առաջ է բերում նոր իմաստի ձևավորում, ինչպես *յեռայ* «եռալ», *հեռայ* «ցավալ», *հէրս/հիրս* «կատաղություն», *հոնի* «ուռի (ուռենի)», *հոն սնէլ* «ճնշել, տանցել, տանցվել, քաշել, ձգել» և այլն: Հայագիտության մեջ այս վերջին հանգամանքը ոչ միշտ են նկատի ունենում՝ հավանաբար լիարժեք փաստեր չունենալու պատճառով:

Կարծում ենք՝ հոդվածում ներկայացվող օրինակները կարող են լրացուցիչ նյութ դառնալ երևույթի նոր ու ամբողջական քննարկման համար:

<sup>15</sup> Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. 3, 1977, էջ 90:

<sup>16</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 152:

<sup>17</sup> Հր. Աճառյան, ՀԼՊ, մաս 2, էջ 414:

**З. А. ЕРВАНДЯН — Выражение начального “з” в карабахском диалекте.** — Исследование лексического состава карабахского диалекта показывает, что утверждение корней (основ) слов проходило по пути сохранения древнего фонетического состава, проявления разных степеней перегласовки, образования корней путем модификации согласных, использования древних корневых форм слов. Все эти явления находят отражение в целом ряде словоформ, изучению которых посвящена настоящая работа.

Одним из наиболее примечательных древних явлений в карабахском диалекте является наличие звука “з” перед гласным в начале некоторых слов, о происхождении, утверждении и территориальной специфике которого существуют разные мнения в арменистике (Гр. Ачарян, Г. Джаукян, К. Давтян и др.).

Формы с начальным “з” охватывают не все говоры карабахского диалекта, поэтому возникла необходимость сбора и обобщения фактов, что, по мере возможности, попытался осуществить автор статьи.

Начальное “з” перед гласными в карабахском диалекте присутствует в основном в коренных словах и словах с неизвестной этимологией. И если в результате новых этимологий постепенно пополняется число коренных слов, естественно, можно предположить, что прибавление “з” перед гласными характерно для древнеармянского языка, и это явление уходит своими корнями в индоевропейский язык.